<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման>> ծրագիր

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ – Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում.

Դասիարակ ՝ Անահիտ Հովեյան

Մանկապարտեզ ՝ <<Երազանք >> Հ. Ո. Ա. Կ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն.....2
Տեսական մաս.....4
Գործնական մաս.....10
Եզրակացություն.....14
Գրականության ցանկ----------15

Ներածություն

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունի երկու կարևոր ինստիտուցիոնալ կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Ընտանիքը երեխայի համար հասարակական փորձի աղբյուր է : Հետևաբար անհրաժեշտ է և կարևոր մանկապարտեզի ու ընտանիքի արդյունավետ համագործակցությունը. Երեխաների առողջության պահպանումն անհնար է պատկերացնել առանց ընտանիքի: Ընտանիքում են դրվում երեխայի վաղ զարգացման հիմքերը: Ծնողներն են, որ երեխային առաջին անգամ սովորեցնում են կյանքի այբուբենը: Ձևավորում նրանց աշխարհաընկալումը, բնավորության գծերը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության փոփոխությունը հանգեցնում է երեխայի դաստիարակության գործում ընտանիքի դրական դերի ընդունմանը: Հասարակական նախադպրոցական կրթությունը աջակցում է ընտանիքին՝ իրականացնելու համակարգված երեխայակենտրոն կրթություն: Ընտանեկան միջավայրն առանձնանում է հուզականությամբ և այնպիսի պայմանների առկայությամբ, որոնց շնորհիվ երեխաների մեջ ձևավորում են՝

1. Համապատասխան վերաբերմունք սեփական անձի նկատմամբ.
2. Ինքնագնահատման կարողություն
3. Աշխարհաընկալում
4. Ճիշտ վարվելակերպ

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են, որոնք կանգնած են ապագայի ակունքներում և նրանց փոխադարձ կապի հետևանքներկրողը երեխան է: Քիչ չեն դեպքերը երբ ծնողներրը դստիարակների կարծիքը չեն կիսում և երբեմն երեխաներին մեղադրում են ծուլության և համառության չլսելու և չհասկանալու մեջ: Կարևոր է, որ մանկապարտեզի և ընտանիքի պահանջները լինեն միասնական դրա համար անհրաժեշտ է՝

1. Աջակցության նպատակով բացահայրել ծնողների կարիքները:

2. Իմանալ մանկավարժների, ծնողների և երեխաների իրավունքները և պարտականությունները։

Ծնողների կրթությունը անհրաժեշտ է մի կողմից երեխայի դաստիարակության բարելավման,մյուս կողմից հասարակության շահերի տեսանկյունից. ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում։ Ծնողները մշտապեսնկարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին։

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությոան արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

1. Ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին
2. Ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ գնահատել նրա ձեռքբերումներն, շտկել թերությունները։

Տեսական մաս

Գլուխ 1

Ծնողների հետ կազմակերպվող մանկավարժական աշխատանքի արդյունավետության բարձրացման ձևերը մանկապարտեզում.

Երեխաների կրթության դաստիարակության իրականացման գործում մեծ դեր է կատարում ծնող մանկապարտեզ օղակը: Մանկապարտեզը և ընտանիքը նույն գետի երկու ափերն են: Համագործակցելու համար պետք է կրճատել և միասին հարթեցնել երկուսի միջև ընկած տարածությունը: Հանրահայտ ճշմարտություն է որ երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, շնորհակալ ու հաճելի գործ է որը չի կարելի ամբողջովին թողնել մանկապարտեզի ուղպրոցի վրա: Ժամանակակից գիտությունն ընդգծում է ընտանիքի առաջնային դերը երեխայի դաստիարակության գործում: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակության նախահիմքերի կառուցումը: Ընտանիքում են դրվում երեխաների բարոյական, գեղագիտական դաստիարակման հիմքերը:

Ընտանիքում են դաստիարակվում երեխաների ինքնասպասարկման ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը , հոգատարությունը: Ընտանիքը հասարակության նյութական,հոգևոր, մշակութային այլ արժեքների փոխանցող օղակն է: Մի շարք հետազոտություններ ապացուցում են սոցիալական ոչ մի խումբ չի կարող իրագործել գործառույթների այնհամակարգը, որն իրականացում է ընտանիքի կողմից և ընտանիքի միջոցով:

Ըստ Սքոթ Պեկի անհրաժեշտ է, որ մենք ինքներս սովորենք լինել կարգապահ և նույնը սովորեցնենք երեխաներին: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների հետ:

Պետք չէ անընդհատ գովաբանել, խրախուսել և կատարել երեխաների պահանջները: Այդ ամենը պետք է լինի չափավորված ու դուրս չկա անհրաժեշտության սահմաններից:

Կարևոր է նաև երեխայի անհատականության պահպանումը չանտեսելով հասարակական վարքի կանոնները: Երեխայի համար ընտանիքը համարվում է դաստիարակվող միջավայր:

Այն իր հետքն է թողնում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա: Երեխան ընտանիքում է ստանում աշխարհճանաչման առաջին դասերը և ծանոթանում կյանքի տարրական կանոններին: Ստացած տվյալները աստիճանաբար ընդարձակվում և բարդանում է այն չափով ինչքանով աճում և զարգանում է երեխան: Որոնք են ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները:

Առաջին առանձնահատկությունը վերաբերվում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին: Ընտանեկան դաստիարակությունն ուղեկցվում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների սիրով և նվիրվածությամբ, հավատարմությամբ: Ընտանեկան ջերմությունը երջանիկ մանկության ուղեկիցն է, ներդաշնակ կյանք կառուցման երաշխիքը: Երկրորդ առանձնահատկությունը մանկավարժական ներգործության մշտական բնույթն է: Ընտանեկան դաստիարակության կայուն և մշտական բնույթը ներգործում է ինքնադաստիարակության սկզբունքով: Ընտանեկան դաստիարակության հուզական և կայուն բնույթը նպաստում է երեխայի նյարդային համակարգի հավասարակշռությունը, հոգեկան ներդաշնակության հանգիստ և ապահով կենսակերպի հաստատմանը: Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային ընտանեկան լուծմանը լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է: Նշված հնարավորությունը երեխային ոգևորում է, և նա ցանկանում է մասնակցելու ընտանիքի բոլոր գործերին: Վաղ տարիքից սկսած երեխան ընտանիքում կարող է ունենալ մշտական պարտականություններ ՝ հավաքել խաղալիքները, կատարել մայրիկի, տատիկի խնդրանքը: Իսկ երեք տարեկանից նա ընդունակ է ծաղիկ և ծառ ջրել: Այսպիսով ծնողներն են երեխային դաստիարակող առաջին մանկավարժը ընտանիքի հետ աշխատանքը կառուցելու համար գոյություն ունի մեթոդիկա մի քանի փուլերով

.

Առաջին փուլ ՝՝Եկե՛ք ծանոթանանք,, ծանոթացում մանկավարժական կոլեկտիվին, կրթական ծրագրի հետ։ Այն ծնողների առջև կբացի համագործակցային աշխատանքների հնարավորությունները։

Երկրորդ փուլ ՝՝ Եկե՛ք բարեկամանանք,, այս փուլում կարելի է խոսել գործառույթների մասին։ Ծնողը տեսնում է թե ինչպես է դասիտարակը ընդունում երեխային, ինչ աշխատանք է տանում մյուս երեխաների հետ։ Սա միաժամանակ և՛ տեղեկատվություն է, և՛ ուսուցում։ Որոշ ծնողներ գերադասում են իրենք զբաղվեն իրենց երեխաների հետ, իսկ մանկապարտեզը դիտարկվում է որպես ընդամենը շփման միջավայր, խաղալու տեղ։ Ավանդական ձևերի կողքին գործում է ընտանիքի հետ աշխատանքի ժամանակակից ձևեր։ Բերենք մի քանի օրինակներ հիմք ընդունելով նաև <<Քայլ առ քայլ >> ծրագրային որոշ տվյալներ։

1. Առաջին այցը մանկապարտեզ.

   մինչև երեխայի հաճախելը ծնողները ծանոթանում են մանկապարտեզի հետ.

2. Կողմնորոշման հանդիպումներ

   ծնողը ծանոթանում է դաստիարակի և այլ ծնողների. երեխաների հետ.

3. Այցելություններ երեխաների տուն.

   դաստիարակը կարող է այցելել, որպեսզի տեսնի երեխայի ընտանեկան միջավայրը .

4. Ե՞րբ երեխային բերել մանկապարտեզ և երբ տանել։

   Օրվա կարգացուցակըմշակել, որ հնարավոր լինի շփվել ընտանիքի հետ ՝ օգտագործելով առավոտյան ՝՝ բարի գալուստի և տուն գնալու պահերը ,,։

5. Հեռախոսային զանգեր

Հեռախոսային զանգերը լինում են հատուկ դեպքերում։ Երեխայի լիարժեք զարգացումը դժվար է պատկերացնել առանց ծնողների մասնակցության։ Դա ամենօրյա ջանք է պահանջում, որը պետք է կատարվի սիրով և հաճույքով քանզի այն արվում է հանուն երեխայի և երեխայի համար, նպաստելու է երեխայի առողջությանը և համակողմանի զարգացմանը։ Շատ կարևոր է, որ մանկավաները կարողանան մեթոդապես ճիշը կատարել երեխայի տնից մանկապարտեզ, խմբից խումբ տեղափոխությունները և այդ ուղղությամբ հատուկ աշխատանք ծնողների և երեխաների հետ։

Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ ձեռներեցության, տնտեսվարության, հաշվենկատության, անկախության և երեխայի արագ աճին։

Ընտանիքի անդամները պետք է.

1. Ժամանակ հատկացնեն իրենց երեխային իսկապես ուշադիր լինելու, նայելու համար, նկատեն հիվանդությունը, խնամքի պակասը։
2. Ավելի շատ ժամանակ անցկացնեն լսելով երեխաներին։

Աշխատենաշխարհին նայել երեխայի աչքերով աշնանային տերևների մեջ թավալ գալ և հիանալ առաջին ձյունով։

Օրը ճիշտ սկսել, լավ նախաճաշել, չմոռանալ հրաժեշտ տալ։

Համբուրել երեխային, գրկել նրան սեղմել ձեռքը և ասել, որ սիրում եք նրան։ Դաստիարակի աշխատանքը ընտանիքի հետ ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը ։ Այս աշխատանքը երեխայի նկատմամբ անհատական մոտեցման անբաժան գործն է, յուրահատուկ օգնություն, միաժամանակ, ոչ ցանկալի որակների կանխում։ Մանկապարտեզը պետք է ստեղծի միջավայր երեխայի ճիշտ զարգացման, ստանձնի խաղընկերոջ դերը։ Երեխայի զարգացման բոլոր ոլորտներում ֆիզիկական, սոցիալական, իմացական փոխկապակցվածությունն է։ Երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում։ Հայտնվելով մանկապարտեզում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում, նրա էմոցիոնալ դաշտում տեղի է ունենում փոփոխություն, նրա դաշտում հինը փոխարինվում են նրերով։ Երեխայի համար մանկապրտեզում սահմանվումէ հատուկ օրակարգ, փոքրիկը զբոսնում է, խաղում է, սնվում օրվա հստակ ժամերին, ստանում է իր առաջադրանքները, որոնք փորձում է կատարել ճշտությամբ։

Նման պարզ խնդիրները երեխաների մոտ զարգանում են պատասխանատվության և ինքնուրույնություն. Մանկապարտեզ հաչախելիս զարգանում են երեխայի՝

1. Սոցիալական հմտությունները
2. Թիմում աշխատելու հմտությունները
3. Խոսքային հմտությունները
4. Հուզական աշխարհը

5. Երեխան սովորում է հարգել դիմացինին
6. Ձեռք է բերում նոր ընկերներ
7. Լայնանում է աշխարհայացքը

Մանկապարտեզը հսկում է երեխայի սահմանված օրվա ռեժիմը: Մանկապարտեզից հետո երեխան ավելի արագ է հարմարվում դպրոցին: Տնօրինությունը դաստիարակի հետ համատեղ մշակում է նախագիծ ընտանիքի հետ աշխատելու համար :

Ընտանիքները տարբեր են իրենց բնույթով, կազմով և գործունեությամբ երբեմն երեխայի ծնողների բացի դաստիարակը գործ է ունենում սաների ծնողների փոխարեն նրանց օրինական ներկայացուցիչների հետ: Ընտանիք-մանկապարտեզդրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ուդաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Երեծայի մասին տեղեկության փոխանակումից շահում է, թե՛ ծնողը, թե՛ մանկավարժը: Ծնողները կարող են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում

Մանկապարտեզում գործում է առաջարկությունների արկղիկ,որը ամրացվում է մանկապարտեզի միջանցքի պատերին ,ծնողները կարող են արտահայտել իրենց մտահոգությունները ,առաջարկությունները և գցեն արկղի մեջ:Արկղը բացվում է ժողովի ժամանակ և քննարկվում է դրա մեջ հավաքված հարցերը: Կարևոր է նաև պատի տեղեկատվական թերթերը ,որի միջոցով ազդարարվում են ժողովներ ,մանկապարտեզում անցկացվող բոլոր միջոցառումները :Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա ,ծնողների հետ աշխատանքի ձևերն են՝ անհատական,կոլեկտիվ և տեսողա-դիտողական :Անհատական աշխատանքը ունի իր առավելությունները ,շփվում յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ,ավելի մոտիկից ծանոթանում երեխայի ընտանիքի հետ:Ավանդույթ պետք է դարձնել ծնողների ,երեխաների,մանկավարժական անձնակազմի մասնակցությամբ .<<Եկե՛ք ծանոթանանք>>,<<ճանաչե՛նք մեր երեխաներին>> և այլ թեմաներով կազմակերպվող միջոցառումների:Մանկապարտեզը կարող է ստեղծել գրքերի,հոդվածների համատեղ ընթերցանություն դիտել և պատմել նկարներ,պատմել հեքիաթներ:

Երեխաների դաստիարակությամբ զբաղվող բոլոր անձերի կողմից կիրառվող դաստարակության մեթոդների միասնությունը և կայունությունը հանդիսանում է դաստիարակության կարևոր պայմանը։Երեխաների հետ պետք է վարվել հանգիստ,սիրալիր,հանդարտ։Փոքր երեխան շատ-շատ է հուզվում,դրա համար նրա հետ շփվելիս չի կարելի խոսել բարձրաձայն,բղավելով կտրուկ և կոպիտ շարժումներ կատարել։Երեխաները շատ շուտ են ներշնչվում նրանց է փոխանցվում շրջապատող մարդկանց տրամադրությունը։Անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել հանգիստ կատարել մեծահասակների պահանջները։Ինչպես մանկապարտեզում,այնպես էլ տանը է պետք է աշխատել,որ տրված հանձնարարությունը կատարել մինչև վերջ։Մեծերի կողմից երեխաներին ներկայացվող պայմանները պետք է լինեն երեխայի ուժերին համապատասխան և հիմնավորված։Երեխայի դաստիարակության գործում անհրաժեշտ է օգտագործել ընդօրինակման մեծերին,ամրապնդեն դրականը ,ոչ թե բացասականը։Մեծահասկների վարքը պետք է օրինակ ծառայի երեխաների համար։Երեխաների բազմակողմանի զարգացման մեծ հնարավորությամբ է օժտված նախակրթարանը ,որը վաղ հասակից զարգացնում է երեխաների մեջ ակտիվություն,կոլեկտիվիզմ և առաջին հակումները շրջապատում երեխաների հետ մտերմանալու հնարավորություն։Նախադպրոցական տարիքում դաստիարակությունը նախակրթարանի կոլեկտիվում պետք է այնպես կազմակերպել,որ ձևավորվի երեխայի անհատականությունը ,իր անձնական հնարավորության վրա։Հենց այս էլ նկատի ունենալով ամենօրյա պարապմունքները,խաղային պրոցեսները,աշխատանքի այնպես է պետք կազմակերպել ,որ աճի երեխայի հետաքրքրությունը մանկապարտեզի նկատմամբ ունենա խիստ նպատակային բնույթ։Երեխաների ուսուցման և բազմակողմանի դաստիարակության համար,ամենից առաջ հարկավոր է ճանաչել ,պարզել ոչ միայն նրանց հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություն,այլ այն թե ինչպիսի միջավայրից է եկել երեխան,ինչպիսին է նրա ընտանիքը,իր վարք ու բարքով։Կարճ ժամանակ անց մենք արդեն գիտենք թե մանկապարտեզի որ երեխան ինչպիսի պայմաններում է ապրում ծնողը որտեղ է աշխատում ,ինչ մասնագիտություն ունի և ինչով կարող է օգնել մանկապարտեզում։Դաստիարակության առաջին օղակը ,ուստի մանկապարտեզը երեխային լիարժեք ու բազմակողմանի դաստիարակություն տալու համար,սերտորեն պետք է համագործակցի ընտանիքի հետ։

Ընտանիքից գալիս է երեխան իր հետ բերելով,անծանոթ մի աշխարհ,որի խորքերը պետք է թափանցի յուրաքանչյուր դաստիարակ։Ինչպես ծնողների կոլեկտիվի,այնպես էլ առանձին ծնողների հետ աշխատանքը կունենա արդյունք,եթե լավ ենք տիրապետում ընտանեկան դաստարակության առանձնահատկությունների։ Դրական արդյունք կսատանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ։ Այն ծնողները, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, անհրաժեշտ է տալ որոշակի գիտելիքներ տարիքային և անհատական առանձնահատկությունների մասին, ինչը հնարավորություն կտա երեխաների մեջ տեսնել և՛ դրականը, և՛ բացասականը, և վերլուծել նրանց արարքները։

Ընտանիքի և մանկապարտեզի կապը երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը կարևոր նախապայմաններից մեկն է։ Դրա իրականացումը պահանջում է խոր գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ, հմտություններ և այլն։

Գործնական մաս

Գլուխ II

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տալիս,որ հիմա ծնողները ավելի շատ են ներգրավվում մանկապարտեզում կազմակերպվող միջոցառումներին.քանի որ նոր մոտեցումներ և ուղիներ են ցուցաբերվում դաստիարակների կողմից։ Ծնողները հաճախ են ներկա գտնվում մանկապարտեզում անցկացվող միջոցառումներին, ունենք ծնողական անկյուն,առաջարկությունների տուփ,որտեղ ծնողները անանուն նամակներ են գցում և դրանք քննարկվում են ծնողական ժողովներում ծնողները երբեմն դիմում են դաստիարակներին, ինչպես վերացնել երեխային կամակորությունը,ագրեսիվությունը.դաստիարակը տրամադրում է համապատասխան գրականություն։

Հարցաթերթիկներում նշվում են հարցեր, որոնք վերաբերվում են դաստիարակությանը, կրթությանը, վստահությանը, ազնվությանը, երեխաների հետ ունեցող փոխհարաբերություններին։

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա, ծնողներին ուշադիր լսելով կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել:

Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողները և դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխայի բնականոն զարգացմանը: Անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել հանգիստ կատարել մեծահասակների պահանջները: Մեծահասկների վարքը պետք է օրինակ ծառայի երեխաների համար: Եվ այդ բազմակողմանի զարգացման մեծ հնարավորությամբ է օժտված մանկապարտեզը: Անցկացվող ծնողական ժողովներից մեկում ծնողները ցանկացան մասնակից լինել խմբում անցկացվող խոսքի զարգացման պարապմունքին: Սիրով համաձայնեցի և ես ընտրեցի ռուսական ժողովրդական հեքիաթ <<Պապն ու շաղգամը>>

Թեմա-Համագործակցություն

Տեսակը-

Հեքիաթի ընթերցում՝ <<Պապն ու շաղգամը>>

Նպատակը-

Զարգացնել գեղարվեստական ստեղծագործությունը լսելու, գնահատելու, հարցերին պատասխանելու կարողությունը,կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը՝ շաղգամ համագործակցել բառերով:

Նախապատրաստական մաս

Զրուցել փոխօգնության ,համագործակցության մասին:

Խթանման փուլ

Փորձեցի մենակ տեղափոխել խմբասենյակի մանկական սեղաններից մեկը, ձևացրեցի,

որ շատ դժվար է չեմ կարողանում, ծնողներից մեկին խնդրեցի, որ շատ ծանր է, հետո խնդրեցի միանալ երկրորդ ծնողին հետո ՝ երրորդին հետո միասին բռնելով սեղանի 4 կողմից հեշտությամբ կարողացանք սեղանը տեղափոխել: Ամփոփենք կատարածը.

Մենակ դժվար էր,քանի որ սեղանը ծանր էր: Իսկ երբ օգնության հասան ընկերները, սեղանը կարողացանք տեղափոխել: Աշխատեցինք համագործակցված:

Իմաստի ընկալման փուլ

Ընթերցել <<Պապն ու շաղգամը>> ռուսական ժողովրդական հեքիաթը: Իրավիճակը ներկայացնող ամփոփ մտքին զուգահեռ դիտել հեքիաթը ներկայացնող համապատասխան նկարը.

Առաջարկել հարցեր .

-Ի՞նչ էր ցանել պապը.

-Ինչու՞ պապը շաղգամը հողից մենակ չկարողացավ հանել

-Ում օգնության կանչեց պապը։

- Ու՞մ օգնության կանչեց տատը։

- Ու՞մ օգնության կանչեց թոռնիկը։

- Ու՞մ օգնության կանչեց շնիկը։

- Ու՞մ օգնության կանչեց փիսիկը։

-Ովքե՞ր օգնեցին պապին։

-Ինչի՞ մասին էր հեքիաթը։(օգնության,համագործակցության,համերաշխության)

Կշռադատման փուլ

Ներկայացնենք ասացվածքներ

1. Ձեռքը ձեռք կլվա,երկու ձեռքը երես։
2. Մեկ ձեռքը,ծափ չի տա։

Հեքիաթը լսելուց,ամփոփելուց հետո առաջարկեցի ծնողներին միասին բեմականացնել հեքիաթը։Ծնողները համաձայնեցին և միասին կատարեցինք դերաբաշխում։Հեղինակի դերը ստանձնեցի ես։Բեմականացումը ուրախություն պարգևեց բոլորին։Իսկ երեխաներին առաջարկեցի հաջորդ օրը,օրվա II կեսին բենականացմանը մասնակից դարձնել իրենց։Պարապմունքը անցավ հետաքրքիր ծնողները նշեցին ,որ իրենք ավելի լավ ճանաչեցին միմյանց և դաստիարակներին։Ցանկացան,որ նման ծրագրերը լինեն շարունակական և պարբերաբար,քանի որ ձեռք են բերում նոր հմտություններ և որենց ներկայությունից ոգևորվում են նաև երեխաները։

Եզրակացություն

Ինչքանով է իմ ընտրած թեման կարևոր ինձ համար։ Թեման հոգեհարազատ է։Երկար տարիներ աշխատել եմ ծնողների հետ համագործակցված ձևով.ծնողները պետք է ներգավվեն մանկապարտեզի ամենօրյա կյանքին, ծնողը պետք է մասնակից լինի մանկապարտեզում կազմակերպված միջոցառումներին, սպորտլանդիաներին։ Այս ուղղությամբ արդյունքները երևում են ծնողների ոգևորվածությամբ, համախմբվածությամբ, վստահությամբ։ Յուրաքանչյուր երեխա եզակի է և ունի իր սեփական ուսումնական կարիքները։ Յուրաքանչյուր երեխա ունի իր ընկալման մեթոդները։ Պետք է ստեղծենք ընկալման տարբեր պայմաններ։ Կրթենք, դաստիարակենք մեր սերունդներին, որոնք մեր ազգի գոյապահպանման հիմքն են։

Նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական և ընտանեկան դաստիարակությունը կապված եմ միմյանց հետ։ Ընտանիքի և մանկապարտեզի առջև ծառացած են համագործակցված խնդիրներ։ Նախադպրոցական երեխայի դաստիարակումը պետք է զուգակցվի մանկապարտեզի և ընտանեկան համագործակցության ձևավորման հետ։ Դաստիարակը պետք է օգնի ընտանիքին՝ երեխաներին ճիշտ դաստիարակելու գործում։ Մանկապարտեզ ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա։

Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն։

Գրականության ցանկ

1.<<Նախադպրոցական մանկավարժություն>> Մարության Ս. Ա., Դալլաքյան Ա.Մ., Երևան , 2008թ.

2.<<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, Միտոյան Հ., Սմբատյան Լ. , Երևան, 2010թ.

3. Դաստիարակենք միասին, հեղինակ՝ Ասյա Հովհաննիսյան 2014թ

4.<<Նախաշավիղ>>, 1.2013

5.<<Նախաշավիղ>>, 4.2012